

Յանուն Մ. Յ. Էմիլի բարձրագոյն Հաստատուած ազգագրական ֆինդը հրատարակել է Ռուսաց լեզուով բաղմամաստակ հայագիտի երկերի երրորդ հատորը՝ переводы и статьи Н. О. Эмина վերնագրով—Մ. Յ. Էմիլի թարգմանութիւնները և յօդուածները:

Այս հատորը Հայոց հոգևոր մատենագրութեանն է նուիրուած և յօդուածների մեծ մասը (վկայարանութիւններ) յընթաց 1859-1882 թուականների տպագրուած են Православное общество, Русскій архив և այլ պարբերական ուսուց մամուլի մէջ կամ Էմիլի հրատարակութեանց ծանօթութիւններն են կազմել, նորութիւն են հետեւեալ դիւրինները՝

- VI Տեսիլ Աստուածածնին Մարիամու, զոր ետես տանջանք (!) մեղաւորաց.
- VII Պատմութիւն երանելոյն Զոսիմոսի, յորժամ զմտաւ ածէր գնալ յերկիրն երանելեաց.
- VIII Պատմութիւն Յովսէփայ և կնոջ նորին Ասանէթի. (այս թարգմանութեան վերջին երեք երեսը պակաս է եղել ձեռագրի մէջ, որը լրացրել է պ. Գրիգոր Խալաթեանը իւր թարգմանութեամբ):

Հատ նշանաւոր է մեր հայագիտի նամակը առ Լազարեան ձեմարանի հոգաբարձու Խաչատուր Լազարեան, որով քննուած է Տէր Գարրիէլ վ. Այվազովսկու «Միջակ վարդապետարան ուղղափառ հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ տպագրեալ հրամանաւ Տ. Յակովբայ աստուածընտիր պատրիարքին Կ. Պոլսոյ ի պէտս աղգային ուսումնարանաց, Փարիզ, 1858»:

Էմիլը իւր նամակի մէջ խիստ քննադատութեան է ենթարկում յիշեալ դասագիրքը և ցոյց տալով նորա կաթողիկական ոգւով լինելը, ջատագով և նախանձախնդիր է հանդիսանում հայոց եկեղեցւոյ ճշմարիտ ուղղափառ դաւանութեան, «նայեցէք, ասում է Էմիլը վերջարանի մէջ, նամակիս վերայ ոչ իրրե մի մասնաւոր գրութեան, այլ իրրե մի բողոքի հայոց եկեղեցւոյ դաւանների մինի կողմից, որ ի գէմս իւր հայրենակիցների խոր խոցուած է հ. վարդապետի (Այվազովսկու) անարգական վերաբերութեամբ գէպի մեր ազգի սրբանազոյն աւանդը, այն է՝ դէպի նորա եկեղեցւոյ վարդապետութիւնը: Ի վերջոյ խնդրում է միջոցներ ձեռք առնել ժամանակին շարիքի տարածուելու առաջն առնելու համար, որ շատ տխուր հետեւանքներ կարող է ունենալ Ռուսաստանում բընակուող հայերի համար:

Պ. Խալաթեանը ծանօթութեան մէջ շատ իրաւացի նկատում է, որ հ. Գարրիէլը (յետոյ արքեպիսկոպոս) վերջը փոխել է իւր հայեացքը Աթոլիկ եկեղեցւոյ մասին: Ապացոյց սորան նա բերում է հ. Այվազեանի թարգմանական հրատարակութիւնը՝ «Յանոսի յաղագս պապին» գիրքը, որ ուղղած է պապի անխալականութեան վարդապետութեան դէմ:

Այս հատորի մէջ աչքի է ընկնում նաև մի փոքր յօդուած, որ հանած է Русск. Вѣд. լրագրի 1879 թուականի 49 համարից և մի ընդգիմախօսութիւն է նոյն տարուայ Моск. Вѣд. 30 համարում լոյս տեսած մի թղթակցութեան Վարսից, որի մէջ յօդուածագիրը ապացուցանել էր ճշմում: Թէ Վարսի Առաքելոց եկեղեցին՝ Գումրէթ-Ջամին, Յունաց եկեղեցի է եղել:

Էմիլը Ստեփաննոս Տարոնացւոյ և Վարդան Մեծի պատմութիւններից վկայութիւններ առաջ բերելով հաստատում է, որ այդ եկեղեցին շինել է Արաս Հայոց թագաւորը և օծել է տուել Հայոց եկեղեցւոյ ծիսով՝ հակառակ Արխաղիայի Բեր իշխանի խրոխտ ցանկութեան օծելու նորան Յունաց ծիսով, Յայտնի է, որ Արասը յաղթեց Բերին և կուրացրեց նորան, իսկ Առաքելոց եկեղեցին օծուեցաւ Հայոց եկեղեցւոյ ծիսով:

Գրքի վերջում ղեկեղուած է Հայոց պարականոն գրքերի ցուցակը, որ առած է Թիֆլիզում 1863 թուին հրատարակուած ս. Էջմիածնի մատենադարանի ձեռագիրների ժողովածուից:

Գիրքը բաղկացած է 367 երեսից և տպագրուած է Մոսկուայում, Գինն է 2 ռ.:

Յառաջարանը 1—XXI գրել է պ. Գրիգոր Խալաթեանը:

ՄԱՏԵՆԱԽՕՍ ԳՐԳԵՐ.

Խմբագրութիւնն շնորհակալութեամբ ստացաւ հետեւեալ գրքերը.

1. Переводы и статьи Н. О. Эмина, 3-й вып. Москва, գինն է 2 ռ.:
2. Հոս կինը, Ա. Ահարոնեան. Նիւթեր մեր ժողովրդական կեանքի ուսումնասիրութեան համար. Թիֆլիզ, գինն է 40 կ.:
3. Նելլուն և Պատրաշը, Ուիգա. Թիֆլիզ, գինն է 10 կ.:
4. Armenische Grammatik von H. Hübschmann, Leipzig. 1897.